

Յ Ո Վ Ս Ե Փ Ա Յ Զ Ե Ր Ք Է Չ Ե Ա Ն Յ Ն Ա Մ Ա Կ

ա ո

Ս Տ Ե Փ Ա Ն Ո Ս Վ Ա Ր Գ Ա Պ Ե Տ Ն Ա Չ Ա Ր Ե Ա Ն Յ

(Նարայարութիւն. *Shu k* 42.)

Հանդէս Նոր հայախօսութեան անուանած սանսկրիտաբանութեանդ մէջ ⁽¹⁾ բերումնս Լուսերի եկեղեցական խորհուրդների եօթնամեայն անհաւան լինելու պատմութիւնը. (մինը հարցանէ, ինչ մտքով է նազարեանցը տպագրում բեֆորմացիայի պատմութիւնը): Հարցանումնք քեզ, նորընծայ *Վարդապետ*, եթէ մին մարդ կրօնի ուսման մէջ գրէ քո պէս, Թէ քրիստոնէութեան հիմնադիրը կարգել է երկու խորհուրդ՝ մկրտութիւն եւ հաղորդութիւն, ⁽²⁾ եւ միւս գրքումը ⁽³⁾ բերելով մի ըստ միոջէ Լուսերի եօթն խորհուրդներին անհաւան լինելու պատճառները, ասէ իւր սեփական դատողութիւնը, Թէ *Մկրտութիւնը եւ հաղորդութիւնը ունեցած են միշտ յարգ եւ կշիռ, եւ էին այն երկու խորհուրդքը, որով պանդանուումէ եկեղեցին*, իմանալով, Թէ իւր ազգային եկեղեցին դաւանումէ բոլոր եօթն խորհուրդքը քրիստոսադիր ու հաւասարապատիւ միւսանց, ասան խնդրումնք, այն մարդուն Հայ կճանաչես, Թէ լուսերական: Գորանից յետ կարելի էր արդեօք հետեւել ծածկել քո լուսերամտութիւնը, որպէս հետեւումնս դու երկխայական ձեռով կապել ընթերցողի աչքերը եւ մեզ հարկադրումնս՝ առանել ակնրես փաստերով կրկին անգամ բացերեւոցել ու հաստատել քո խարդախութիւնը: Ծիծաղաշարժ չբնորոշեամք խնդրումնս մեզ պարզաբանել, որ եթէ դու իբրեւ պատմաբան ծանօթութիւն տալիք Մահմետի դաւանութեան վերայ, մեք կասէինք արդեօք, Թէ դու մահմետական ես, եւ կարծումնս, Թէ այդ հարցմունքով կարելի է քեզ ծածկել, սքողել եւ կամ արդարացնել քո գրութեան միտքը: Բայց եւ այնպէս կատարումնք քո խնդիրը: Եթէ Մահմետի դաւանութեան պատմութիւնը գրած լինէիր մին գրքի մէջ եւ համաձայն այն պատմութեան՝ Նոր դաւանութիւն, որպէս գրումնս Լուսերի դաւանութեան պատմութիւնը Հանդէս Նոր հայախօսութեան ասած սանսկրիտաբանութեանդ մէջ եւ Նորա կրօնի ուսումը քո սեփական վերանորոգութեան կրօնի վարդապետարանի մէջ, եթէ Մահմետի ուսումը նկարագրէիր այնքան օրինակելի, որքան հաւանելով ու զարմանալով նկարագրումնս Լուսերի բեֆորմացիան եւ Նորա վարդապետութիւնը. եթէ Մահմետին տարփողելով կոչէիր *եւսիստանաւորութեան գործի եւ երախտաւոր ոչ միայն իւր հայրենիքին, այլ եւ թուրքական տէրութիւնին* ⁽⁴⁾, որպէս զմայլած կոչումնս Գերմանիայի բեֆորմատորին, այն ժամանակ առանց կասկածանքի եւ երկմտութեան կասէինք հրապարակի մէջ, Թէ դու մահմետական ես. այս եւս չգիտէիր, քաջուսումն *Վարդապետ*, որ պէտք էր անտարակոյս ասէինք այդ խօսքը: Սխալը հետեւումնս ուղղել այնպիսի օրինակով, որ առանել եւս հաստատումէ եւ ոչ Թէ ուղղումէ այն սխալը. միայն մնացել է հարցանես, որ եթէ անունդ լինէր ոչ Թէ Սանկանոս, այլ

Կարոյոս, միթէ մեք պէտք էր կոչէինք քեզ Կարոյոս, կամ եթէ Հրէից մտքեր ընդունէիր, միթէ քեզ կկոչէինք Հրեայ. հրաշալի հարցմունք, հիանալի օրինակներ, որ շատ հաւանելի կլինին Սաղաներին եւ Նոքա կկոչեն դոցա *ազգայէն զաղափարներ*: Զէ՛, Պ. Նազարեանց, իզուր եւ աշխատում ծածկել քո մտքերը ժողովուրդի տեսութիւնից. քո մտքերը տպագրութեան են՝ եւ Ռուսաց առածը ասումէ՝ *Где была, там и дорога*. Ժողովուրդը տեսանումէ, Թէ ինչպէս մեր եկեղեցական խորհուրդները ազգանի նման խառնել եւ, դրել եւ ամենի առաջումը, Նոցանից մինը (պսակը) հրամայումնս խզել՝ քո եւ Սաղայի քմացը հաճոյ պայմաններով. միւսոց համար (դրոշմի, ձեռնադրութեան եւ այլն) ասումնս, Թէ կարելի էր հիմք առնուլ այս կամ այն Ռուսերէյ խօսքը՝ կասէք Թէ մեր եկեղեցին Նոր ինքնոյ ջննումէ իւր խորհուրդները եւ հարցմունք մին Խոյնցի անվերաբար վարդապետից, Թէ ինչ բան կարելի էր հիմք առնուլ այս կամ այն խորհրդի համար. եւ յետոյ կամենումնս դու, Նորընծայ *Վարդապետ* լուսերականութեան, որ մեք քեզ Հայ ճանաչենք, եւ ասումնս, Թէ մեք քեզ լուսերական ենք ցոյց տուել ժողովուրդի առաջնա. իբր Թէ ժողովուրդը չէ՛ տեսնում քո գրութեանը, որ տպագրութեամբ տարածուած է Նորա մէջ. եւ եթէ ժողովուրդի մէջ գտանուի մի մարդ, որ ասէ, Թէ քո գրութեան մէջ չկայ լուսերականութիւն, մեք այն մարդուն համարձակ կբարոզենք այսուհետեւ կամ չհասկացող կամ կամաւ լուսերական, երրորդ ինչ կամ միջին բան չրկայ: Չկարողանալով ինքնին հաստատել, Թէ գրածներդ մէջ չկայ լուսերականութիւն, բերումնս քո բնատուր սովորութեամբ մին կողմնակի զրոյց, Թէ մին ամբողջ գաւառի եւ պիսկոպոս է եղել քո վարդապետարանի դատաքննիչը ⁽¹⁾: Հարցանումնք քեզ, ուսումնազող *Վարդապետ*, քո օրագիրը չէ՛ր որ 9 ամսատետր. 1858 թուակ. մեր Հայոց բոլոր եպիսկոպոսներին վճարար եւ առանց բացառութեան կոչումէր *տգեաւներ, յիմարներ, խաւարի զաւակներ* եւ այլն. եւ այլն: Այն ժամանակ մոռացել էիր, որ մեր ազգի մէջ կայ գոնեա մին իմաստուն եպիսկոպոս՝ քո վարդապետարանի դատաքննիչը. սորա անունը վասն է՛ր չէիր հանել արգէտների եւ յիմարների թուից. արդեօք կայ այս տեղ մին մոծակի չափ խելք: Եթէ քո մտքերը լուսերական չեն, ուր եւ բերում իբրեւ հաստատութիւն կարծիքական Յիմարութեանդ այն եպիսկոպոսի դատաքննիչ լինելը, որին որ բոլոր Հայոց եպիսկոպոսների հետ միասին ինքդ քո բերանով կոչումնս *յիմար* ու *տգեա*. իսկ եթէ կայ լուսերամտութիւն քո գրութեան մէջ, որ ոչ մին մոռնող հայի, Նոյն իսկ դատաքննիչ եպիսկոպոսի համար երկրայելի պէտք չէր լինէր, ով որ միանգամ հայերէն կարդացածը հասկանումէ, դու ինքդ ասան մեզ դորա պատճառը, այսինքն՝ ինչպէս է եղել որ այն եպիսկոպոսը հրաման է տուել տպագրելու այնպիսի մտքեր, որ ընդդէմ են Հայոց եկեղեցու դաւանութեանը, դորա մէջ պէտք է լինի մին պատճառ եւ մեզ համար ծածուկ է այդ պատճառը. երկնքից եւ երկրից համար

(1) Հանդէս Նոր հայախ. եր. 221—229:

(2) Վարդ. կր. 53:

(3) Հանդ. Նոր հայախ. եր. 234, տող. 20—23:

(4) Հանդէս Նոր հայախօս. երես 243, տող. 28—31:

(1) Հիսթորիա 42 ամսատ. 1860:

բաւեր ջոհները, տեսնում ենք միայն մեք, Թէ քո Վարդապետարանը ընդդիմախօսումէ յայտնապէս Հայոց ազգի դաւանութեանը: Եթէ այս մեր պատասխանով ջբաւականանայ ձեր ծայրալիք ուսումնականութիւնը, Թող այն դատաքննիչ եպիսկոպոսը՝ բացայայտ ապացոյցներով հերքէ մեր ցուցմունքը եւ հաստատէ տպագրութեամբ, Թէ ձեր գրութեաների մէջ չկայ լուսերականութիւն. ապա Թէ ոչ, լուս կացիր, նորընծայ *Վարդապետ*. հաւատան մեր ասածներին, եթէ ինքը չես հասկանում քո սեփական գրութեաները. ձեռ վեր առ կրօնական առարկաների վերայ խօսելուց. քո գործը Թաթարի, Սանսկրիտի, Արաբի լեզուներն են. ուր եւ մտել աստուածաբանութեան հանդէս, հեռացիր մեզանից, յայտնապէս մոխր լուսերական կամ սրտեստանտեան եկեղեցին եւ ոչ սուտ Հայ մնալով՝ որսացիր մեր պարզամիտ եղբարցը լուսերի Թակարդը, ուր ինքը ընկել եւ. կամ ուղղիր քո սխալները ընդդէմ աստուածաբանութեան եւ սրբազան պատմութեան՝ գիտնական Առաքել Արարատեանի խոհական եւ ազգաշահ աշխատութեամբ, որ ոչ միայն Գերմանիա գնալուցդ առաջ վարժապետը է եղել, այլ եւ ներկայ օրերումս, այն լուսաւոր աշխարհից վերադառնալուց յետ, դեռեւս ուսուցանումէ քեզ, որպէս ամենեւեմ տեսնում ենք, եւ այդ պատճառով, ամենեւեմ հասկանալի իրաւունքով • ձեռադր • արժանաւորապէս անուանումէ մեր բարձրապատիւ ուսումնականին *գիտնական*, *քաջուսումն* եւ *հանճարամիտ*, գնա, գնա, երախտագէտ աշակերտի նման համբուրիր քո արժանաւոր վարժապետի ոտքերը. մի ամաչիր բան սովորելուց. ամօթ է չիմանալ եւ ոչ Թէ ուսանելը. *Via ad discendum nonquam est sera*. Նա կառաջնորդէ քեզ հարազատ հայութեան Յանապարհը, որից խոտորուել եւ:

Բացենք այժմ քո նոր հայախօսութեան ասած հանդէսը ու մեր կարծիքովը Հայոց լեզուն ու հաւատը մոռանալու ասարեգը, կարգաւք 237 երեսի 36—39 տողերը մինչեւ հետեւեալ երեսի 5-երորդ տողը. «Բախանայի օրհները եւ Տաշակէլը հաց ու զինին, չէ՛ պատարագ եւ ոչ բարեգործութիւն, այլ եւ այն նորախնար ուսումը, որպէս Թէ հացը եւ զինին նիւթապէս փոխարկումէին, կամ Թէ Տշմարիտ կապակցութիւն սրբած հացի եւ տէրունական մարմնի մէջ հաւատալ, այդ բանը Թողած էր հաւատաւորի ազատ կամքին: Եկեղեցական խորհուրդքը սահմանափակուածն Մըկրտումեան, Ապաշխարութեան եւ Հաղորդութեան կարգերով, որ յատկապէս Քրիստոսի ձեռքով դրած էին: Ով գերաշահն է *Վարդապետ*. արդեօք մեր Հայոց եկեղեցին այդպէս է ուսուցանում. արդեօք այդ մտքերից մինը համաձայն է մեր ուղղափառ դաւանութեանը. արդեօք քո վարդապետարանի դատաքննիչ եպիսկոպոսը կընդունէ՞ նոյնպէս ինչ որ Հանդէս նոր հայախօսութեանը գրումես, Թէ • Բախանայի օրհները ու Տաշակէլը հաց ու զինին չէ՛ պատարագ եւ ոչ բարեգործութիւն, կամ Թէ՛ հացի ու զինու նիւթապէս փոխարկուելը կամ մի Տշմարիտ կապակցութիւն սրբած հացի եւ տէրունական մարմնի մէջ հաւատալը Թողած լինի հաւատաւորի ազատ կամքին: Դու կասես, Դու կասեանները կկրկնեն, պարզամիտները կհաւատան, Թէ այդ խօսքերը պատմաբանօրէն են ասած. բայց այդպիսի խաբերական պատասխան մեզ միւս անգամ չտալու համար, բացիր 243 երեսը, կարգաւ 28—31 տողերը եւ հասկացիր, որ այդ տեղ չկայ ամենեւեմ պատմութիւն, այլ խորտէ խօստովանութիւն, Թէ դու սիրահարուած, զմայլած լուսերի ուսման վերայ, բացայայտ բառերով ընդունումես նորա անհայն խօսքը, նորա վերանորոգութեան Յանապարհը, որա կոնական ինքնամիտը հերժուածը. կարգաւ. «Լուս-

տերը, մի պարգեւական գործիք նախախնամութեան, վերանորոգելով մաքուր քրիստոնէական ուսումը, վերակենցաղեց նոյնպէս ազատ հոգու իրաւունքը, եւ այդպէս երախտաւոր եղաւ ոչ Թէ միայն իւր հայրենիքին, այլ եւ բովանդակ աշխարհի: Պատմութիւն է այդ, քաջուսումն *Վարդապետ*, Թէ գովեստ Լուսերին՝ իբրեւ վերանորոգողի մաքուր քրիստոնէական ուսմանը եւ հետեւաբար յայտնապէս ընդունելութիւն նորա մաքուր ուսմանը, որպէս դու ասումես: Պատմաբանը բերելով որ եւ իցէ անցը, եթէ գովումէ իրողութեան ներգործողին, այն ժամանակ չէ մնում պատմող, այլ ըննիչ եւ դատող գործին եւ գործողին. ցոյց է տալիս, Թէ նա հաւանումէ, ընդունումէ այն գործը. ապացուցանումէ, Թէ այդպէս պէտք էր ընթանալ եւ առնել ամենին, ով որ լինէր այն պատմական անձին տեղ: Դու, նորընծայ *Վարդապետ* վերանորոգութեան, կոչումես Լուսերին *պարգեւական գործիք նախախնամութեան, երախտաւոր ոչ միայն իւր հայրենիքին, այլ եւ բովանդակ աշխարհի* եւ նորա վերանորոգութիւնը՝ մաքուր քրիստոնէական ուսումը, եւ այժմ, անկատար երեխայի նման, կամենումես հաւատացնել մեզ, որպէս հաւատացրել եւ Դուկասեանին, Սադային եւ մին քանի նոցա նմաններին, Թէ դու պատմաբան եւ այս տեղ եւ ոչ Թէ յայտնապէս ընդունող եւ պաշտպանող Լուսերական ուսմանը, որը որ կոչումես մաքուր: Եթէ նոյն բառերով խօսէիր Մահմետի վերայ եթէ Մահմետին կոչէիր *պարգեւական գործիք նախախնամութեան, երախտաւոր ոչ միայն իւր հայրենիքին, այլ եւ բովանդակ աշխարհի* եւ նորա սահմանած հաւատը՝ մաքուր ուսումն, արդեօք կլինէիր պատմաբան, Թէ մահմետական:

Բացիր 255 երեսը նոյն սանսկրիտաբանութեանը հանդէսումը. կարգաւ 20—24 տողերը: «Շվիաբիայումը երեսեցաւ Յովհաննէս Բրինցը, որպէս առաջին րեֆորմատորներից մինը, եւ 1523 Թուականին ահա Շվիաբիայ քաղաքումը վերացրեց պատարագը եւ նորա հետ կից բոլոր արարողութիւնքը, Թէպէտ յառաջուց հիմնապէս դաստիարակելով ժողովուրդը Տշմարիտ հաւատի մէջ: Ո՛ր մարդը աշխարհի երեսումը այնչափ կոյր պէտք է լինի, որ չկարողանայ հասկանալ Դուկասեանի նման, Թէ այդ խօսքերը գրելով ցոյց եւ տալիս յայտնապէս, Թէ դու հաւան եւ պատարագի եւ նորա հետ կից արարողութիւնների վերացմանը եւ համաձայն եւ բոտ ամենայնի Յովհաննէս Բրինց րեֆորմատորի հետ, որովհետեւ նորա հաւատը՝ վերջին տողումը՝ կոչումես *ճշմարիտ*, ասելով Թէ նա, այսինքն Բրինց րեֆորմատորը յառաջուց *հիմնապէս դաստիարակեց ժողովուրդը ճշմարիտ հաւատի մէջ*, պատարագի վերացումը կոչումես *հիմնական դաստիարակութիւն*, ու վերեւումը, տող 18, նոյն մղար քարոզութիւնը կոչումես *Աստուծոյ բառ*, ասելով • Միւս տարի Աստուծոյ բանը քարոզուեցաւ նոյն իսկ քաղաքի մէջ (Ուլմ) Ֆրանցիսկոսեան ապեղանների եկեղեցու եւ Մայր եկեղեցու մէջ: Բեֆորմատորները քարոզումէին պատարագի վերացումն ու դու նոցա գործը կոչումես *Աստուծոյ բառ*, Թէպէտ եւ գիտես, կամ գուցէ չգիտես, Թէ մեր ազգային եկեղեցին Աստուծոյ բան է համարած պատարագը եւ ոչ Թէ նորա վերացումն: Այդ եւս պատմութիւն է, զարմանալի *Վարդապետ*, Թէ յայտնի արխիմարիանք եւ մերժումն ազգային դաւանութեան: Բացիր 256 երեսը եւ կարգաւ Դուկասեանի, Սադայի եւ Նալբանդեանցի հետ 27—30 տողերը • Յովհաննէս հրաժարուեցաւ կաթոլիկութեան հիմքերից եւ պահանջեց հարկաւորապէս, որ բոլոր քրիստոնէութիւնը տարուի ու հաստատուի սուրբ գրքի հիման վերայ: Բացիր այժմ եւ կարգաւ նոյն համախոսներից հետ

Հիսիսափայլի 10 ամսատեղրակի 312 երեսմը քո սրտի հրապարակական խոստովանութիւնը. «Հայոց եկեղեցին պիտոյ է մի ընթերցում առնէր ոտքից մինչեւ գլուխ, այսինքն՝ մի ազգու վերանորոգութիւն Աւետարանի հաստատման հիման վերայ, ինքարկէ ներգործելով արմատից դէպ ի վեր»: Հաւասարեցէք չորս հոգի այդ երկու բանը, քո եւ ընթերցողներեքի խոստովանութիւնը, կոյ արդեօք դոցա մէջ որ եւ իցէ զանազանութիւն. ինչ որ Յովնգլին ասումէ հոռոմէական եկեղեցու համար, հրամարտելով նորա հիմքերից եւ հարկաւորակէս պահանջելով, որ բոլոր քրիստոնէութիւնը տարուի ու հաստատուի սուրբ գրքի հիման վերայ, մի եւ նոյնը չէ՞, ինչ որ դու կապիկի նման կրկնելով ընթերցողներին գործը, ասումես մեր Հայոց եկեղեցու համար, Թէ պիտոյ էր մի ընթերցում առնէր ոտքից մինչեւ գլուխ, արմատից դէպ ի վեր, այսինքն մի ազգու վերանորոգութիւն Աւետարանի հաստատման հիման վերայ: Այս տեղ ոչ միայն միտքը, այլ եւ բառերը եւ մի եւս նոյն են:

Այսպիսի ապացոյցներ ոչ միայն բառական էր, այլ եւ աւելորդ, ձեր տպագրութեամբ ընդունած լուսերամտութիւնը հաստատելու համար. բառակա էր սոցանից մկնը, որ դու չկարողանայիր համարուել քո ընթանով արտասանած, քո ձեռքով գրած ու տպագրութեամբ տարածուած սեփական սրտի հրապարակական խոստովանութիւնից. միով բանիս արդարացի եւ միով բանիս դատապարտեցի մարդ՝ ասումէ մեր Փրկիչը: Սակայն տեսանելով, Թէ դու անամօթարար ընդդիմախօսութեան մեր բացայայտած ճշմարտութեանը, չես հասկանում, կամ հասկանալով ծածկումես խորամանկութեամբ քո գրուածների միտքը, հարկաւոր ենք համարում բերել այլ եւս զօրաւոր փաստեր քո աներկբայ լուսերամտութեանը՝ քո սեփական գրուածներից քաղելով: Բացիք նոյն տգիտութեան հանդէպը, երես 232. կարգւոյ 36—39 տողերը՝ «Լուսերը այժմ մի փոքր միջոց հանգիստ գտանելով, սկսեց ասելի խորամուխ լինել սուրբ գրքի մէջ եւ նորա լուսովը քննելով ճանաչեց մի հոռոմէական *բիւր վարդապետութիւնը* միւսի քամակից, զոր օրինակ եկեղեցու եօթն խորհուրդի մասին»: Այս տեղ ահա եկեղեցու խորհուրդների եօթնամիւր լիովն ամենեւում (միայն խալք չեն լուսւմ եւ տգէտները չեն հասկանում) կոչումես *բիւր վարդապետութիւն*, որը որ ճանաչել է քո խելքով աղանդաւոր Լուսերը, եւ գիտես Թէ մեր Հայոց մեծ եկեղեցին ընդունումէ նոյնպէս եօթն խորհուրդ. ոչ ապաքէն քարոզումես յայտնապէս եւ սորա վարդապետութիւնը *բիւր*. որովհետեւ եթէ *բիւր* է հոռոմէական եկեղեցու վարդապետութիւնը խորհուրդների եօթնամիւրի մասին, հետեւարար *բիւր* է եւ Հայոց եկեղեցու վարդապետութիւնը նոյն եօթնամիւրի վերայ. եթէ $a=b$, եւ $d=a$ ուրեմն $d=b$. եթէ հոռոմէական եօթնամիւր *բիւր* է, իսկ հայկականը հաւասար է հոռոմէականին, ուրեմն եւ հայկականը *բիւր* է, մամեմամբիքական անհրաժեշտ օրէնքով: Ի՞նչպէս էք գտանում, իմաստազեղ *վարդապետ*, այդ փաստը մեր լուսերականութեանը: Դուցէ այս եւս բառական լինի, գուցէ Սաղան ասէ, այդ տեղ լոգիկայ չկայ. գուցէ նախանշեանքը ասէ, Թէ սուտ է այդ փաստը այն պատճառով, որ մեք վարագորի քամակումն ենք անցուցանում մեր կեանքը, baculus stat in angulo, ergo pluit, եւ այդպիսի եզրակացութիւնը հաստատէ երդմամբ, ասելով, Թէ Աստուած վկայ, նորա խօսածները ճշմարիտ են: Վասնորոյ բերումենք դարձեալ մին փաստ քո ընթանով խոստովանուած աւետարանական կամ որ մի եւս նոյն է լուսերական հաւատ ունենալուդ: Կարգւոյ հետեւեալ 233 երեսմը 18—20 տողերը՝ «Հնդկաւոր չէ՞ ոչ լուսերական եւ ոչ պապական, այլ առողջամիտ

քննող ու զննող քրիստոնեայ, որի հաւատը նոյն է, ինչ որ ուսուցանումէ Յիսուսի Քրիստոսի աւետարանը»: Այս տեղ բառերով խաղ եւ անում, Պ. Նազարեանց, ու հետեւումես խաբէլ պարզամիտներին: Ասումես լուսերական ու պապական չես, այլ առողջամիտ քրիստոնեայ, որի հաւատը նոյն է, ինչ որ Յիսուսի Քրիստոսի աւետարանը ուսուցանումէ: Հարցանումենք քեզ, առողջամիտ քրիստոնեայ, ինչ է քո հաւատիդ անունը, եթէ ոչ պապական եւ, ոչ լուսերական, ու պէտք է Հայ եւս չլինիս, որովհետեւ չես ասում, Թէ Լուսաւորչական եւ: Աւետարանը ամենայն քրիստոնեայ ընդունումէ. ուրեմն Աւետարանը ընդունումեմ ասելով, քո ազգային եկեղեցու անունը չտալով, չես իմացնում մեզ, Թէ ի՞նչ հաւատ ունես դու, որ եկեղեցու որդին ես, ու միայն ասումես, ոչ այս եմ, ոչ այն եմ. վախենումես, կամ ամաչումես ասել Հայ եմ. եթէ ասած լինէիր Հայ ես, այն ժամանակ առանց քո ասելու կիմանայինք, Թէ ոչ պապական ես եւ ոչ լուսերական: Ուրեմն համաձայնիր, քննող ու զննող քրիստոնեայ, Թէ որչափ իրաւացի էր գլխական Աւագբէլ Արարատեանի խօսքը, Թէ քո Վարդապետարանը քո կրօնի վարդապետարանն էր⁽¹⁾: Բայց ասելով, Թէ քո հաւատը նոյն է, ինչ որ ուսուցանումէ Յիսուսի Քրիստոսի Աւետարանը, հաստատումես արդէն Թէ դու ծածուկ աւետարանական ես. եւ քեզ աւետարանական կոչելով խոստովանումես յայտնի Թէ լուսերական ես. որովհետեւ ամենեւեցուն յայտնի է, Թէ լուսերականները կոչումեն խրեանց յատկապէս աւետարանական, այնպէս, որ լուսերական ու աւետարանական այդ մտքով համանշանակ բառեր են:

Կարգւոյ, «քննող ու զննող քրիստոնեայ», նոյն 233 երեսմը հետեւեալ տողերը. «Բայց Աւետարանի ուսումը ծուղ կամ անտես առնել, որ պապերի եւ միւսերի խօսք ու կամք յառաջանայ, այդ բանին հոգով ու մարմնով ընդդէմ է նա (այսինքն հեղինակը)»: Հարցանումենք քեզ, ով են այդ միւսերը, որ քո ասելով, պապերի նման ծուղում եւ կամ անտես են առնում աւետարանի ուսումը: Յայտնի է, որ այդ միւսերը ասելով չես հասկանում աւետարանականներին, որովհետեւ բոլոր քո գրուածներդ նոցա պաշտպանութեան համար են, ու ինքդ եւս աւետարանական ես, ինչպէս տեսանք վերեւումը: Այդ միւսերը պապականները եւս չեն, որովհետեւ պապերին յիշումես առանձնակի. ով է ուրեմն մնում. որ քրիստոնեան է, որ Աւետարանի ուսումը ծուղէ ու անտես է առնում.—մնումն է Հայք, որոց դու յատկապէս այդ պատճառով քարոզումես վերանորոգութիւն Աւետարանի հաստատման հիման վերայ: Թող պահանջեն Հայք իւրեանց վերանորոգութեան վարդապետից, Թէ երբ եւ որպէս են ծուղ կամ անտես արարել նոցա սուրբ Աւետարանը. իսկ մեք շարունակենք մեր խօսքը: Կարգւոյ, քննող ու զննող *վարդապետ*, 236 եր. 31—33 տողերը՝ «Այս ծանօթարանութենից յայտնի է ահա, Թէ ինչ պատճառով անհաւան էր Լուսերը խորհուրդների եօթնամիւրին. միտ դնելով սկզբնական եկեղեցուն, որ ընդունել էր երկու գլխաւոր խորհուրդ: Միւս հինգ խորհուրդները, որ դաւանումէին կաթողիկոսին, յունական եւ մեր Հայոց եկեղեցին՝ պրոտեստանտական եկեղեցին չէ՞ համարում»: Ի՞նչ պատճառով եւ ծանօթարանում, Պ. Նազարեանց, Լուսերի խորհուրդների եօթնամիւրին անհաւան լինելու պատճառները, եթէ ինքդ ընդունումես եօթն խորհուրդ. միթէ կարող է մարդս իր համոզմանը հակառակ ապացոյցներ բերել: Պրոտեստանտները չեն ընդունում, ասումես, մնացեալ հինգ խորհուրդը

(1) Տես, Սլաւանք Վարդապետարանին կրօնի Ստեփ. Նազարեանց. Տիփլիս, 1858. գրեալ յԱւագբէլոյ Արարատեան իզգուշութիւն համազգեսց:

շատկապէս քրիստոսադիր. այդ մէք ամենեքեան քեզանից առաջ գիտէինք. նոցա գլուխը քարը. բանը այն է, նորըն-
ծայ *Վարդապետ*, որ դու նոցա նման համարելով մնացած
հինգ խորհուրդը ոչ քրիստոսադիր, հանումես մեր եկեղե-
ցու ընդունած այն հինգ խորհուրդը խորհրդների եօնա-
մուկից, եւ քո կրօնի Վարդապետարանումը գրուածն՝
«Քրիստոնէութեան հիմնադիրը կարգել է երկու խորհուրդ»
Մկրտումիւն եւ Հաղորդութիւն : (Եր. 53) : Քո գլուխն
էլ քարը. մեր հոգը, մեր ցաւը այն է, որ պարզամիտ մար-
դիկ, կարդալով քո մոլորաշափող գրեանքը, կարող են հեշ-
տութեամբ հաւատալ, թէ երեւի իրաւ է, որ միւս հինգ
խորհուրդը քրիստոսադիր չեն, եւ գոցեց ընդունեն մին մո-
լորութիւնդ միւսից յետ, որոց մէջ առաւել հրապուրիչը եւ
համանգամայն աւելի ազգակործանը այն է, թէ Հայը օտա-
րի եկեղեցի գնալով՝ մնումէ մեզ կորայր (') : Այդ նենգաւոր
բանի ստուգիւնը չհասկացող Հայը կարող է առանց դժուա-
րութեան ընդունել քո քարոզած այլակրօնութիւնը, կար-
ծելով՝ թէ չէ կորուսանելու դորանով իւր ազգայնութիւնը :

Այսպէս քո ազգային, քրիստոսադին, Առաքելական եկե-
ղեցու պատմութիւնը թողած եւ նորա բազմադարեան անփո-
փոխ միակերպ ուղղափառ դաստիարակութիւնը արիամարհելով.

(') Հիւսիսափայլ 10 ամսատ. 1860 թ. :

սիրահարուեցար Մարտին Լուտերին. կոչեցիր նորան պար-
գեական գործիք նախախնամութեան, վերանորոգող մա-
քուր քրիստոնէական ուսման ու երախտաւոր բովանդակ
աշխարհի. սերտեցիր նորա պատմութիւնը, գնացիր նորա
ճանապարհով. նորա իւրաքանչիւր խօսքը, միտքը, նա եւս
բաւերը կոյր աշակերտի նման կրկնեցիր բաւ առ բաւ քո
ազգի մէջ. խօսքով ու գրով քարոզեցիր նորա խօսածը ու
գրածը, սկսած ազատութեան հանդէսից կրօնական առար-
կաների մէջ մինչեւ արմատական վերանորոգութիւնը մեր
եկեղեցու մէջ. քո պաշտօնը լիովին կատարեցիր. ինչ է
մնում քեզ այժմ առնելու մեր մէջ աւելի. ոչինչ. գնա՛,
ուրեմն. վերադարձիր քո նոր հայրենիքը. ասա քո նոր
հայրենակիցներին, թէ նոցա քեզ յանձնած պաշտօնը կա-
տարեցիր այնպէս, որպէս պատուիրել էին քեզ. այլ թէ ինչ
օգուտ կարող են նոքա քաղել քո նուիրակութիւնից, ասա.
Թէ Հայք քո քարոզութիւնը ընդունեցին իրրիւ բովանդակ
համար վճռելի ցաւ. թէ բազմաբարձար, Առաքելապատիւ
Դրիգոր Լուսաւորչի ոտի եղունգը չեն կամենում փոխել Լու-
տերի գլխու հետ. ասա, թէ քո անունը դրեցին՝ վերանորո-
գուած նորընծայ անվերայ *Վարդապետ*. խանգարիչ մաքուր
քրիստոնէական հայկազեան ուսման. ապերախտ քո հայրե-
նիքի, ուրեմն եւ բովանդակ աշխարհի առաջեւ :

(Նարայարութիւնն յառաջիկայս.)

ՂՈՒԿԱՍ ԱՊՍՏՈՒՐՈՂ ՀԱՅԱՍՏՆ.

Ձանազան ժամանակներ այլ եւ այլ պատճառ-
ներով եւրոպա անցած պանդուխտ Հայերուն
ամբողջ պատմութիւնը եմէ հաւաքուի ու գրուի,
անտարակոյս շատ հետաքրքրական ու գովելի
աշխատութիւն մը կլինի. խօսքերնիս Հայաստա-
նի կողմերէն բազմութեամբ ու ժողովրդով եւ-
րոպա անցնող Հայոց համար չէ միայն, հապա
նաեւ անոնց որ մինակ մինակ քաշուեր են տեղ
տեղ, ու ո՛րը ծանօթ՝ որը անծանօթ իմարդկա-
նէ՝ աստուածահաճոյ վարքով անցուցեր ու կըն-
քեր են իրենց կեանքը :

Ասոնցմէ մէկն է նաեւ ակնեցի Ղուկաս Ապաշ-
խարողը, որոյ վրայ անակնկալ կերպով փոքրիկ
յիշատակարան մը ընկաւ ձեռքերնիս հանդերձ
պատկերով՝ զոր հոս կհրատարակեմք :

Ղուկաս պատանին աղքատ ծնողաց զաւակ
էր : Տասնեութեան տարեկան եղած ատենը Ակն
(Եկին) քաղաքէն կելլէ ու բաղդ մը գտնելու յու-
սով Կոստանդնուպոլիս կերթայ : Շատ չանցնիր,
իւր գործունէութեամբն ու սրամիտ աչքաբաց
բնաւորութեամբը յաջողութիւն կգտնէ ու բա-
ւական փողի տէր կլինի : Բայց մե՛ղք որ շա-
տերուն գլխուն եկածին նման՝ հարստութիւնը
Ղուկասին ալ պատճառ կլինի սոսկալի մեղաց :
Այն մեղքերուն ինչ եղածը չգիտեմք, որովհետեւ
յիշատակագիրը լուծեամբ անցեր է. այսչափը
միայն կըսէ թէ տարիներով մեղաց մէջ մնալէն
ետքը, Ղուկասին միտքը կլուսաւորուի շնորհօքն

Աստուծոյ, աչքին վրայ ձգուած վարագոյրը կը-
պատուի, կտեսնէ իւր մեղքին ծանրութիւնը, կը-
սոսկայ կզղջայ, եւ միտքը կղնէ որ նոցա ապաշ-
խարանքն այս աշխարհիս մէջ քաշէ քան թէ անդին :

Դժուարին երեւցեր է Ղուկասին իւր միտքը
դրած ապաշխարանքը Կոստանդնուպոլսոյ մէջ կա-
տարել. որոշեց որ երթայ օտար երկիր պանդխտի,
եւ հոն քաւէ ապաշխարութեամբ իւր մեղքը :

Յը մը յանկարծ մայրաքաղաքէն աներեւոյթ
եղաւ, ինչպէս որ երեսունընթեմ տարի յառաջ
ալ Ակնէն ելեր էր, բայց բոլորովին տարբեր մտ-
քով եւ վախճանաւ. այն ժամանակը հարստու-
թիւն ու մեծութիւն գտնելու փափաքով, հիմա
այն գտած հարստութեամբը սեւցուցած հոգին
մաքրելու բաղձանքով :

Շատ կփնտռեն զինքը իւր որբացեալ ընտա-
նիքն ու բարեկամները, եւ չեն գտներ՝ կյուսա-
հատին. կարծիք կընեն թէ Վոսփորին ալիքնե-
րուն մէջ ուրիշ շատերուն պէս խղճուեր կոր-
սուեր է : Իսկ Ղուկաս Դաղդիոյ մէկ ծայրը հա-
սած՝ սկսեր էր իւր ապաշխարութիւնը 1755-ին՝
յիսունընիւնգ տարեկան ատենը, ինչպէս որ ձեռ-
քերնիս անցած ձեռագրին մէկ անկիւնը համա-
ռօտիւ նշանակուած է :

Վերին Հոսնոս ըսուած նախանգին Քովմար քա-
ղաքին մօտ՝ Քայղէրսպէրկ անունով գիւղաքա-
ղաք մը կայ. անոր քովի լեռանը վրայ շիներ էր
Ղուկաս իւր ձգնարանը՝ ծառի ձիւղերով, եւ